ջը եղած պատկերաքանդակներով և խաչաքանդակներով մի սքանչելիք է (պատկ. 145, 146). Թեղենեաց վանքի գաւիթը շինուած է 1167 թուին(*), իսկ ԺԳ. դարում գրեթէ չկայ մի տաճար, որ իւր գաւիթը չունենայ, որոնց թւում և Պռոշեանց իշխանութեան սահմաններում եղած վանքերից Կեչառոյքն



Պատկեր 149.

ու Գեղարդը։ Այս շէնքերի բնորոշ կողմերն են հաստահեղոյս չորս սիւները (պատկ. 147), որոնց վերայ հաստատուած են չորս կեդրոնական կամարները, որոնց վերայ բարձրացող սֆերիկ և երդիկաւոր գըմբէթով (պատկ. 148, 149)։ Սիւները կամարներով կապ-

(*) Խաղբակեանք Ա., եր. 161-2, պատկ. 62։

ուած են ոչ միայն իրար հետ, այլ և համապատասխան պատերի որմայեց կիսասիւների հետ, կեդրոնական երդիկաւոր կիսագմբեթի շուրջը կազմելով տափակ կամ բոլորաձև առաստաղներով սրահներ։ Կիսագմբեթի երդիկով վերջացած առաստաղը մինչ զարդարուած խաչաքանդակներով և պատկերաքանդակներով (Հոռոմոս, պատկ. 146), երկրաչափական և ճարտարապետական (Թեղենեաց վանք, պատկ. 62(*) Կեչառոյք պատկ. 148), բայց առաւելապէս ստալակտիտներով (Գեղարդայ վանք, պատկ. 149. Անիի Առաքելոց գաւիթը են.)։ Սրահների առաստաղները

(*) Անդ, եր. 161-2, պատկ. 62։